



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. Տ. Շ. Ա. Խ.

Կիրայշյան


# ՀՆՉԱԿ

(Զամարկական նւեր Տ—ցի Գաղթականներին)

«Երբ որ Հայը դուժարւի—  
Նրան չի հաւասարւի,  
Հացերէն չըգիտացողը .  
Կիսատ Հայ կըհամարւի»  
(Աշբեղ-Ջիւանի)

---

Ա. - ՊեՏԵՐԲՈՒՐԳ  
ԻՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1905



Ամբողջ քաջազնութեան գրադարան  
ուղարկված է պատուից  
ու պահպանութեան համար  
Տ. S. ՀԻՍ 19 NOV 2010

91.99

Q-83

ՀԱՅԱԿ

W. M. ԸՆՅ  
(Հայոց Ակադեմիայի հայոց ակադեմիայի պահպանութեան համար)

(Զատկական ակը Տ-ցի Գաղթականերին)


Վերսին շնչառական  
անդրամիկի և կլի  
սիրան աւարտ նի օ  
18 նոյ. 1918 թ. Թումանյան

«Երբ որ Հայը գումարեի—  
Նոսն չի հաւասարեի,  
Հայերէն ըրգիւղողը  
կիսառ չայ կը համարեի»:  
(Աշըղ-Ջիւտին)

Ա. - Պետրովին

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1905



21.02.2013

27472

Дозволено ценз. С.-Петербургъ 2 Июля 1905 г.

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ, д. 4.

## ՀԱՅԱԿ

ԶԱՏԿԱԿԱՆ ՆԻՔԻ Տ—ՑԱՊԹԱԿԱՆՆԵՐԻՆ

Ո.

Տ—ցի եղայր!

Ով ինչ կուզէ՝ ասէ թող, բայց ես հաւատացած եմ, որ աղնիւ մարդը երբէք չի ուրանայ իւր մայրական լեզուն:

Եւ զիսե՞ս ինչու.

Որովհետեւ իւր մայրենի լեզուն կորցրած մարդը նմտն է այն հնչակին \*),  
որը զրկւել է իւր լեզուակէն:

Առանց ալդ լեզուակին նա, հնչակը,  
միայն արտաքին ծեռվ կրթիշեցնէ քեզ այդ  
առարկան, իսկ ժառանիել իրա կոչմանը՝  
չէ կարող երբէք:

\* ) Հնչակին դուք Տ—ցերդ ճշնկւթե կառեք, իսկ  
ոռուաները զվօնոկ (ЗВОНОК) կասեն, թուրքերն եւ  
պահած զենք կասեն:

Առանց զնդզնդոցի հնչակն ի՞նչ անեմ,  
առանց հայ լեզւի հային ինչ անեմ:

Հիմա դու ասա՛, սիրելի աղբէ՛ր, ինչի՞  
նման են այն մարդիկ, որոնք որեւէ հայ-  
կական ընկերութեան մէջ, որևէ հայկա-  
կան հանդէսում, ուր կրտիրապեաէ հայ  
հնչակը—հայ լեզուն, բերանները բացած՝  
ապուշ-ապուշ կրտիտեն չորս դին՝ առանց  
մի բան հասկանալու... մինչեւ որ մու-  
րացկանի նման պլուխ ծուեն մի իսկա-  
կան հայի առաջ, որպէսզի վերջինս օտար  
բառերով բացատրէ իրեն՝ խօսւածները,  
կարդացւածները և կամ երգւածները, որ  
այնուհետև ինքն էլ կրաւորականապէս  
մասնակից լինի հանդիսին...

Սրբեօք այլպիսի դրութիւնը նման  
չի լինիլ այն բանին, որ անօթութենէն  
տանջւող մարդկանց ափիբերան կանգնեցր-  
նես, ծառայի պէս, այն սեղանին դէմ, որի  
շուրջը շարւել են բաղդաւոր մարդիկ ու  
անուշ-անուշ կվայելեն պատւական խոր-  
տիկները։ Դու երեակայի՛ր մեր ոտի կան-

դնածների դրութիւնը.—պիաի սպասե՞ն,  
մինչեւ որ սեղանը շրջապատողները մի լաւ  
շտանան, վայելեն Աստուծոյ բարիքները,  
բերաններն էլ սրբեն և ապա «Համեցէք»  
անեն նրանց, որ մի փոքր մօտենան համն  
ու ժամը կորցրած ամաններին...

Բայց ինչեր կասեմ—այդ գեռ ոչի՞նչ։

Դու երեակայիր մալրենի լեզուն ու-  
րացածների վիճակն այն պարագային, երբ  
հերթը նրանց հասած լինելով ստիպ-  
ւած են իրենք էլ, ուրիշների նման, մի  
բան ասելու, իրենց հունարը ցոյց տալու,  
իրենց հայ լինելն ապացուցանելու, իրենց  
գաղափարները, ուրախութիւնը և կամ  
արտձութիւնը զիմացիններին հաղոր-  
դելու...

Դու, անշուշտ, կըլիշես այլպիսի եր-  
թալիք-չդալիք բոպէներ, այս՝ կըլիշես,  
քանի որ իմ խօսքս քեզ հետ է և դու-  
Տ—ցի ես.—որքան խղճալի են այդ մար-  
դիկ, որքան ամօթահար... կուգեն, որ  
գետինը պատուի և իրենց ողջ-ողջ

կուլ տայ, քան թէ այդպիսի խայտա-  
ռակութիւն գայ իրենց դարաւակ գլխին...  
Կը իշխէս, ինչպէս կաշխատին մի կերպ  
թագնւիլ մարդոց երեսէն, որպէսզի ի-  
րենց բարոյական բովիկութիւնը երե-  
ւան չելնէ: Ուղիղ չէ, որ նրանք այդպի-  
սի բովէներին հաղար ու բիւր երանի  
կուտան այն աղքատներին, որոնք թէւ  
դրպաններումը մի սև կոպէկ անդամ չու-  
նին, բայց գիտենալով իրենց մալրենի լե-  
գուն, ամօթով չեն մնայ երբէք՝ երբ հեր-  
թը իրենց հասնի...

Բ.

— Ես մեղաւոր չեմ—կասէ մէկը՝ մի-  
ամիտ կերպով արդարանալու յուսով.—  
Հայրս է մեղաւոր!

«Ինչո՞ւ»:

— Որովհետեւ երբ ես փոքր էի՛ հայի դըպ-  
րոց նա չուղարկեց:

— Ես մեղաւոր չեմ—կասէ երկրոր-  
դը.—Մայրս է մեղաւոր!

«Ինչո՞ւ»:

— Ինձ չի օրօրեց հայի «նանի»-ով,  
չերգեց հայ լեզւով:  
— Ես մեղաւոր չեմ—կասէ երրորդը.—  
Դարն է մեղաւոր!

«Ինչո՞ւ»:

— Նա ինձ կաշկանդեց պիրկ շրդթա-  
ներում, պրկեց իմ լեզւն:  
— Ես մեղաւոր չեմ—կասէ մի ուրի-  
շը.—Թուլքն է մեղաւոր!

«Ինչո՞ւ»:

— Նա ինձ սպառնաց, «հանէ հընէա-  
կէդ, ասաց, միջուկը և իմս հնչեցուր:

— Մենք մեղաւոր չենք—կասէն շա-  
տերը.—Մօղան է այդպէս!

«Աչ!»

Գ.

— Ի՞նչ է պատահել, ախար, տընա-  
շէն,—կասէ, գիտեմ, իմ ազիղ ընթերցո-  
դը,—ի՞նչ սատանայ է մտել փորդ, ո՞վ է

զմխեղ աքացի տւել, կամ տունդ-տեղդ  
կրակել, մոխիր դարձրել, որ ալգակս փըր-  
փըրած բերանով թուք-մուր կըթափես  
մեղ անծանօթ թշւառներին վրայ ու  
տակաւին չես էլ պարզեր հանքն հանե-  
լուկիդ...

— Է, իմ անդին աղբեր, դու երբեք  
դժբաղսութիւն ունեցել ես շրջապատ-  
ւելու այնպիսի արիւնակիցներով, որոնք  
ոչ թէ չեն գիտեր ու ալդ պատճառով  
էլ չեն գործածեր իրենց աննման մայրենի  
լեզուն, այլ էշը ցեխէն հանելու՝ բարնո-  
ցը տանելու չափ գիտեն հալ լեզուն,  
բայց անհոգի-անսաստուածի պէս ելեր՝  
հայերէնը մօդալէ ծդել են ու կըխօսին—  
գիտե՞ս մւմ— հոտած տաճկի լեզուն:

Զե՞ս հաւատար իմ վերջին բառերին:  
Ասենք, իրաւունք էլ ունիս չ'հաւա-  
տալու, բանի որ գիտես թէ՝

Տաճիկն այն ազգն է, որ գիշեր-ցորեկ մեզ  
կը հայհոցէ մեր սուրբ հաւատին, բրիս-  
տոնէի խաչին, մեր ժամ ու պասին, մեր

հօր, մեր քրոջ, մեր մօր, մեր կնոջ, մեր  
տան օճաղին, փխերկի ծխին, նոյնիսկ պա-  
պերիս գերեզմաններին...

Տաճիկն այն ազգն է, որ իւր կեանքու-  
մը գործածած չըէն աւելի արիւն է հա-  
նել մեր՝ սրաէն:

Տաճիկն այն ազգն է, որ իրա համար  
հալալ է սեպած հալի մալ-միւլքը, փողն  
ու ցամաք հաց:

Տաճիկն այն ազգն է, որ գարերէ հետէ  
զրկած է մեղի մեր պապենական իրա-  
ւունքներէն:

Տաճիկն այն ազգն է, որ՝ իրեն յատուկ  
վալրագութիւնով անբաղդ հալ ցեղին  
այնքան տանչելով,—ստիպեց մեղի թող-  
նել տուն ու տեղ, անդ ու անդաստան  
հայրենի օճաղ, չըեր պատւական, գերեզ-  
մանները նախնեաց, պապական,—մեր սրբ-  
տին մօտիկ վալրեր նւիրական ու գառ-  
նալ թշւառ, խեղճ, թափառական... մին-  
չե որ մէշը այս պանդխտութեան վերջ  
զրւի մի օր մեր հեղդ գոլութեան...

ԱՌԻ, ի՞նձ էլ ցանկալի էր չհաւասար՝  
ես էլ կուզեի համոզւած լինել, որ հայր  
ամեն լեզու կարող էր երբ և իցէ գոր-  
ծածել հայկականի փոխարէն—բայց եր-  
բէք տաճիկ լեզուն:

Սակայն չէ կարելի խօ աչքաթող ա-  
նել այն զուտ և դառնազոյն իրողութիւ-  
նը, որ XX դարում մի քանի տասնեակ  
հազար հայ անունը կրող մարդիկ գեռ  
չեն հասկացել վերոյիշեալ պարագաները  
և... տաճիկըն կրխօսին!

Դ.

Ինչու կրբարկանաս, Տ—ցի եղբայր,  
սուտ է ասածս: Նայի՛ր կեանքի հայելիին  
մէջ ու տե՛ս դէմքդ, — վրաղ հայի շնոհը  
կա՞յ, կարո՞ղ ես մի բանով ցոյց տալ քո  
հայութիւնը:

Դժբաղբաբար, ոչ, ոչ, ոչ:

Եթէ հագուստդ ասես, նախ որ հայ-  
կական ոչինչ չկայ վրադ և երկրորդ որ

հագուստով ոչինչ չի լինիր, քանի որ մի-  
ևնոյն լաթը իմ արիւնը խմող տանիկն  
էլ կրհագնի կամ կարող է հագնել, չու-  
հուդ Արբահամն էլ, քիթը ծոմոտկած  
իվանն էլ:

Եթէ կնը ու խումբ ասես, դարձեալ  
իզուր է, քանի որ կերածդ «Լանթակն  
ու խուփիծ, եահնին ու լորիան, լազու-  
թըն ու խափօխն...»— լազերն էլ կուտեն,  
դրկից յոյներն էլ:

Իսկ եթէ յանկարծ նիստ ու կացդ  
ասես, աղամարդու պէս ահա կասեմ քեզ,  
որ դու հայ ախպար չես ներկայացներ,  
քանի ներկայիս «ատեթումն» ես դես:

Ասա՛, քեզ զուրբան, Տ—ցի եղբայր,  
ունի՞ս հայ հոգի, ունի՞ս հայի սիրտ, ու-  
նի՞ս դու հային իւր ինկած տեղէն բար-  
ձրացնելու շնորհը ու փափադ, ունի՞ս  
դու կեանքի որոշ նպատակ...

Դէ՛հ, ասա՛, իսկոյն, փալփալե՞լ ես դու  
այն սուրբ Աւանդը, որ մեր պապերը

դժոխքումն<sup>\*\*</sup>) անզամ անաղարտ պահած  
ու որդւոց որդի միշտ սրբագործած կր-  
տակել են քեզ,—ի՞նչ ես պապանձւել, ուր  
է ըստ լեզուն...

Ինչպէս կընախանձիս հիմա ըստ դրա-  
ցի յոյներին, որոնցմէ եթէ երկու հոգի  
դառնեին հարիւր աղաղզէ կաղմւած խրն-  
ճովքում, իրենց հնչակը կըհնչեն էլի, թէ-  
կուզ ողջ աշխարհ քար ու քանդ լինի:

Դուք կզգաք, այս՝ որ հելլէնների այդ-  
պիսի վարձունքն է խիստ գովելի, սա-  
կայն կրկին ձեր էշը կըքշէք, կրկին «օ-  
գուննում» կըբացականչէք: Իսկ եթէ մի  
տեղ 100 Տ—ցիք 2 աղաղզու կողքերէն  
անցնիք, տեսած ես երբէք, որ թողած  
չըլինիք ձերն՝ ու այն երկսի լեզով չի-  
խօսիք:

Թէկուզ Աստուածը երկնքէն կանչէ,  
դարձեալ մազաշափ ձեր ումուրին չէ:

Եթէ ֆուտդ փաշան բարեհաներ մի

\*\*) Մեր պապերը միթէ դժոխալին կացութեան մէջ  
չէլուն.

փոքր ներողամիտ լինել, ես կըվերցնէի  
նրա մի գողարիկ բանաստեղծութեան եր-  
կու տունը և կըփատթէի ձեր վղին.

Աչա այդ, մի փոքր փոփոխած իմաս-  
տով:

«Կիրտինիզ հայճանըն գանընա,

Լէքէ կէթիրափինիզ շանընա,

Հէփինիզին փի՛ս ճանընա...

Նէ ութանմազ մաղրուլ սընըզ:

«Ատէպսիզլիքտէ թէքլար սընըզ,

Թիւլքճայի էթէքլարարնըզ,

Օ տիլաէն իմտամտ պէքլարարնըզ...

Նէ ութանմազ մաղրուլ սընըզ:

Թող աւելորդ չ'համարւի դրանց բա-  
ռացի թարդմանութիւնը, որ կըգնեմ  
այստեղ.

«Մտաք հայ լեզւի արիւնը—

Արատաւորեցիք անունը.

Ամենիզ էլ հոգիին նենդ...

Ի՞նչ անպատկառ մարդիկներ էք:

«Եղական անզգաներ էք՝

Տաճիկ լեզուն կըրնդդրկէք.

Դրանէ ի՞նչ շահ կակնկալէք...  
Ի՞նչ անպատճառ մարդիկներ էք:  
Զեղ համար չեն տաւած այդ տողերը,  
բայց սամոյր մուշտակի պէս կրնստին  
կռնակներիդ:  
Բարի վայէլումն!

Ե.

Դու չես սիրեր հալին լեզուն, Տ—ցի  
եղբայր:

Դու չես սիրեր հալին լեզուն—այդ բա-  
նը ես հաստատ զիտեմ: Թէ դու քիչ խիղն  
ունեսալիր, տաճկերէնում չէր խրւեիր, այ  
միջոցներ ձեռք կառնէիր, որպէսզի քոնը  
սովորէիր, կամ զիտցածդ գործածէիր,  
ամենուրեք դու սիրալիր քո հնչակը պիտ  
հնչէիր, քո հնչակով բացէ ի բաց պիտ  
օրհնէիր քո Տէր Աստուած...

Դեռ բացի այդ մտածել ես՝ այս որ-  
տեղեր կրթափառես, Հեռու իսպառ այն  
ամենէն, որոնք մանուկ քո հասակէն կապ-

ւած կին հոգիիդ հետ անքակտելի կար-  
ծես յաւէտ...

Ո՞ւր է, եղբայր, քո պատւական, այ-  
րիացած թշւառ Վաթան, ուր են ար-  
տերդ, տուն-տեղ, պարակդ, որոնց սէրը  
չեներ սրտէս, մինչդեռ իսքդ մոռցած  
չամախն՝ կեանք կը վարես անտանական...  
Հապա այսպիսի սև պայմաններում,  
թէ չիպահպանես գոնէ քո լեզուն, տօն,  
էլ ինչնի կերաշխաւորես, թէ գու հայ  
ազգի համար մեռած չես...

Միտք արա՛ մի քիչ, իմ անուլ աղբէր,  
զիսէդ անցածներն աղէկ միտքդ բե՛ր, տե՛ս  
որ Սև ծովի տաճկական ափանց ոչ մի  
կէտն այնքան հայ չէ արտաքսած, զրիսա-  
ւորապէս զէպ Մուս Քեռիի<sup>\*)</sup> լաղթա-  
պանծ, հպարտ Արծւի թերին տակ, որ-  
քան հալրենիքն է քո բրիշակ:

Ազսած Բաթումէն մինչև Օդեսա—մի-

<sup>\*)</sup> Տաճկաց-Հպաստանում փոխարերարար Քեռի-Մօ-  
րեղբայր կանւանեն Ռուս Պետութիւնը: Քեռին շուտով  
կուդայ, կասեն, մեզ կը փրկէ պատուհանէն:

այն Սև ծովի ափին է գեռ սա, — մինչեւ  
Ռոստով-Դոն, մինչև Դաղստան, Օլդայի  
ափերն, խորքն Անդրկասպեան, նաւթի  
աշխարհը, Ռուսա-Հայաստան... ուր էլ և  
գնաս՝ Տ—ցի կրդտնաս, որոնք անհովիւ  
ոչխարի նման ցրւած ամեն կողմ՝ ահա  
մայրական իրենց փարախէն պիտի հեռա-  
նան, ապա անկշոռւմ ժանտ կռոնոսի  
անկշտում փորին պատառ պիտ դառնան:  
Գոնէ մեռնելի՞ս քո խեղճ շրմունքը  
չայ խօսք թոթովիք,  
Յայնժամ իմ լեղուն քո ալդ վարմունքը  
Ընդմիշտ պիտ դովիք!

Զ.

Երբեմն էլ, կրյիշես, Տ—ցի եղբայր, որ  
արդարանալու անյաշող փորձով կասէիր  
ինձ դու.

— Մենք Տ—ցիքս թիւրքնա լաֆ կո-  
նինք ամմա, սրյանիրս հէյի է... Սշէ՛,  
համշէօնցիք հայճա կրխորաթին հընդ՝

ուրինք տաճիկ են... Էլ կիտի Շւոտ ախ-  
բար, դու իմ թիւրքնա խորադուշին ա-  
շիլ մի՛...

Բայց ալդաել էլ կրսխալիս դու, Տ—ցի  
եղբայր. մի՛ մոռանար, որ Քրիստոս ա-  
սաց, թէ մարդուս լեզուն է սրտին վը-  
կան (սրտի զեղումէն կրխօսի բերան),  
քանի որ դու հայերէնը գիտես, տաճկի  
էլ ինչ ճանավար եղածն է յալտնի քեզ,  
ու գարձեալ հոտած տաճկին անսարդ լե-  
զուն բերանէզ վար չես ծգեր, ես Բնչակէս  
հաւատամ, թէ քո սիրար հայ է:

Սիլտը հէյի ըլլուշը պէտքը բօն է ամմա,  
էտամօն սիյտ ուննողը ասլա հէյ չի մնայ.  
Ես պատահիթ հէյ հիստակ կօնիմ էն  
մաշդուն օրա,

Վել օր կօք հէլլուխ տութար ուր  
ազգին կէօրա:

Զէ, քո պատճառաբանութիւններն ան-  
զօր են համողելու ինձ, որ իրը թէ դու  
հայ ես:



Համշէօնցի «տաճիկն» է հայ, որ կը հըն-  
չցնէ հայի հնչակը։ Նա „տաճկացել է՝  
տաճկաց սովորթանների անտանելի հարլու-  
տահարութեանց շնորհիւ, բայց ալսօր-վա-  
ղը կարող է համշէօնցին ինձմէն ու քեզ-  
մէն էլլաւ հայ դառնալի քանի որ նա անա-  
ղարտ պահպանել է իւր պապերի հրն-  
չակի այն անհրաժեշտ մասնիկը, որը կը-  
գնզգնդացնէ հնչակը և կրզարթեցնէ քնած  
հոգիներին։ Մատաղ լինիմ հայի հնչակին,  
երբ նա պահպանւած է մէկի մէջ, մէծ է  
նրա զօրութիւնը, մի օր էլ իւր սրբա-  
զան զօղանչիւնով կ'աւետէ մեղ վաղուց  
ցանկալի վերապարթնումը թմրածներին...  
իսկ դուք առանց հնչակի եթէ բերաննե-  
րով սուր էլ բռնէք, Աստուած վկայ, ի-  
վերչոյ անսւաղ կ'մեռնէք։

Իսկը իւր բերնով պիտ պատմէ քեզ  
համշէօնցին ալդ բոլորը, եթէ աչքէ անց-  
կացնէ այս տողերը։

Մի բան էլ ասեմ՝ ալդ լաւ իմանաս,  
որ բանի ալսակէս տղէտ դու մնաս, ինձ-

մէն այս կարգի շատ բան կ'իմանաս (թէ-  
շեցնէ կուղ մինչ երկինք գնասո-բարձրանաս)։  
Խօսի՞ր օտարի հետ օտարի լեզւով. սովո-  
րի՞ր, եթէ ծեռքէդ կուգայ, հարիւր լիզու,  
ամեն մէկէն հարիւր տեսակ կըտեսնես օ-  
գուտ, բայց աններելի մեղք կ'անես հոգուզ,  
եթէ քո հային հետ տաճկերէն զարդես,  
վսահէմ որ հասկացար, բանի որ մարդ ես:  
Բայց թէ երբէք չ'հասկացար՝ ինչումն  
է բանը,  
Ականիշ դիր որ լսես խօսքիս վերջաբա-  
նը։ —  
Տաճկի լեզւով մ'օրհնիր հօրս գերեզմանը,  
Բայց թող անէծք թափէ այնտեղ հայ  
բարբառը!.

Ե.

Դարձեալ շնորհակալութիւն ձեր կին-  
արձատներին, որոնք պատւաստել են ձեր  
կեանքին մէջ հայկական ծիլեր։ Եթէ ըլ-  
լինէին ձեր կանալք, երեսներիդ կասեմ  
ահա, դուք վաղուց տաճկացած կըլինէիք։

Ա.փառն, սակայն, որ ձեր նազելի ճա-  
հիները հետզետէ կարծես մօդայէ լր-  
ծղեն մաքրենի լեզուն և կարծես ձեր ախ-  
տով պիտի վարակւին:

Գիտես որ (խօսքը մէջերս խոստովա-  
նանք մնայ) մի անգամ էլ ուրիշ կերպ  
ուզեցիր արգարանալ:

— Ես զբարարնա չուզաիմ հրննը,  
կամընչնամ:

Ս.լուեղ էլ հոգիդ խալսել չես կարող,  
որովհետև «պօպակիդ լեզուն» այնքան  
անուշ այնքան պատական է, որ եթէ  
հազար հատ Օսմանցւի կամ Թրէնիկի լեզու  
տան ինձ, հաւատա՛ որ, Մալալի կամ  
կատարուքսալի լեզւին հետ չեմ փոխեր  
ես: Ի՞նչ է եղեր ձեր լեզւին, փառք Աս-  
տուծոյ, եթէ շարունակ գործածես, պի-  
տի տեսնիս, որ շատ չ'անցած՝ միշտ բա-  
նող գութեանիդ ծեփին պէս պիտի սկսի  
պօպակիդ լեզուն էլ մաքրւիլ, սիրուննալ,  
փալլիլ...

Ի՞նչ գուցէ գու կրկարծես, թէ ես շատ

«կրաբառնա» սովորել եմ, կամ իմ ծը-  
նընդավայր Բալուէն որ գուրս եկայ 9  
տարի տակէ առաջ, իմ լեզուն այնպէս  
էր ինչպէս այժմ է, — օ, ոչ. եթէ գու լը-  
սես Բալուցոց բարբառը, ոչինչ չես հաս-  
կանար և ես Բալուի հարազատ զաւակն  
եմ, ձննդենէս ի վեր նրա սուրբ կրծքին  
կառչած ու իմ արիւնքբատինքով ձեռք  
բերած մէկ-երկու խօսքերով հազիւ թէ  
քեզ հասկանալի լեզով կարողանալի խօ-  
սել հետդ 9 տարի տառաջ... Հետզետէ  
աշխատելով, աշխատելով վերջապէս կա-  
րողացայ մի փոքր տանելի գարծնել իմ  
լեզուն... Միենայն բանք կարող ես անել  
և գու—ուժ տալ ինքնօգնութեան և ըն-  
թերցանութեան և մի օր պիտի տեսնես,  
որ քո չանքերը պատկւած են յաջողու-  
թեամբ, ու այնուհետեւ գժւար չի լինիլ  
որոշ ընտրութեամբ ընթերցանութեան  
նիւթերի հետամուռ լինել...

Մի խօրով, չ'կայ աշխարհումս մի զրժ-  
ւարութիւն, որին յաղթել կարելի չ'լինի,

մանաւանդ որ մեր խօսքը կըվերաբերի  
հայ լեզւին, որը դու նորինորոյ չպէտք  
է սկսիս սովորել, այլ զիտես և կ'մնայ  
կոկել, կամ քեզ պէս ասեմ, մի փոքք  
«դրաբարացնել»...

Եհարկէ, շատ էլ անհրաժեշտ չէ, որ  
դու անպայման մեր ալսօրւան միակ օ-  
րաթերթ „Մշակն“ ունենաս ի նկատի,  
եթէ դու էլ կրդտնես, որ «Մշակի 100  
բառէն 50-ը չիհասկանալ՝ ֆրանսերէն,  
գերմաներէն, անգլերէն, ռուսերէն, լատինե-  
րէն, պարսկերէն... երէն... երէն չգիտցող  
ընթերցողը»։ Շատ դժւար չի լինիր քեզ  
Ճարել հայ հոգւով գրւածքներ, արեւ-  
լեան և արեւմտեան բարբառներով \*), ո-  
րոնք համաշաւասար չափով եթէ սիրես  
ու ընտելանաս նրանց, մի բարի գործ  
կատարած կրլինիս։

Մէկ էլ թէ «կամընչնամ» կասես պա-  
պական հնչակն հնչեցնելու, որովհետեւ

\*.) Ես դիտմածը կըդորձածեմ միացեալ բարբառը.  
այդ առթիւ մի ուրիշ առգամ կըխօսինք քեզ հետո

դա մի փոքք „կոպիտ“ կըթւի եղեր մի  
քանի ոտարոպիկ աւազակների, որոնք  
դուրկ լինելով գէթ քո ունեցածի չափ  
բարոյական արժանիքներէ՝ քեզ էլ իրենց  
չետ փչացնելու կաշխատին...

Թող «ամընչնան» այն պարոնները, ո-  
րոնք յանուն Սրբազն Գաղափարի կը-  
մտնին քո գրպանը և կրդարտկեն ու ա-  
ռանց մտածելու քո զարդացման ու յա-  
ռաջադիմութեան վրայ՝ կերթան քեզ նր-  
ման այլ բարեմիտների գրպանները թե-  
թեացնելու...

Թող «ամընչնան» այն սեահոգիները,  
որոնց գուք տէրտէլ կանւանէք և որոնք  
նոյնպէս ծեղ կողոպտելէն չոկ ոչ մի պար-  
տականութիւն այլևս չեն նանչնար։ Բա-  
ւական է, որ նրանց «մէշոկները» ցորե-  
նով ու գրպանը գրամով ժանրաբեռնէք,  
նրանք կըմոռանան այլես, որ «հովիւ»  
են ընտրւած...

Թող «ամընչնան» քո այն հայրենա-  
կիցները, որոնք քո արիւն-քրտինքով կա-

բողութեան աէր են դառել և այսօք հրեցակին տոկոսնեղով քեզ արիւնաքամ կը դարձնէն...

Թող «ամընչան»...

Բայց դու քո պապական հնչակի զի զի զօղանշիւնով դիտակցութեան պաշար ամբարելէ երբէք չ'պէտք է «ամընչան». դա պատիւ է քեզ դա քո պարտը ըլըն է. այդ է, որ պէտք է փրկէ քեզ».

### Վ. Ե Ր Ջ Ա. Բ Ա. Ն

Է՞լ ինչ ասեմ քեզ, Տ—ցի եղբայր, եթէ դու հայի կաթ ծծած ես, անշուշամի բան դուրս կլրերես իմ այսքան խօսածներէն, բայց եթէ միտքդ դրել ես ինքնոգորի նման պապանձեցնել մալրական սուրբ հնչակը—այդ էլ քո գործնէ, մեղքը վիդդ, որովհետեւ.


Պիլէնէ սիվրի-սինէք սազ տըր,  
Պիլմէնէ տափուլ-զուռնալ տա աղ տըր.

(Հասկացողին համար մժեղն երգիչ է, Զ'հասկացողին—դհոլ զուրնան էլ բիչ է).  
Մէկ բան էլ ասեմ, մեղքի մէջ չիմրնամ. ես այս տողերում դիտմամբ չիմտայի խորունկ փիլխոփայութեանց մէջ, քանի որ դու չ'պէտք է հասկանայիր. ուստի և խօսեցայ քեզ ծանօթ առարկաներէն ու խելքիդ մօտիկ եղանակով, որպէսզի դու հաստատ դիտենաս, որ ես քո բարիքը կամեցող, քո հոգուն զուրբան եղող փոքրիկ աղբէրդ եմ:

Վաղը Քրիստոսի ս. Յարութեան տօնըն է, ես վճռեցի օղիի և գինիի փոխարէն հիւրասիրել քեզ այս փոքրիկ զբրույկով, որը և յարգանքով կընտիրեմ Տ—ցի Գաղթականներիդ:

15/28 Ապրիլ 1905

Ա. Ն Ա. Փ Ա.



ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Քիւրտ Պէկ» (Բ. տպագր.) . . . . .	15	կոստ.
Սըրամը (Բ. տպագր.) . . . . .	25	»
Սնաստուածները . . . . .	40	»
Մերձեցում (Սնուբչները) . . . . .	20	»
Սև հարսանիք . . . . .	8	»
Դաստ (կրիտիկական անալիզ) . . . . .	8	»
Քրդերը Տաճկաց-Հայաստանում. 75		»
Հնչակ . . . . .	10	»

Պ Ա Տ Բ Ա Ս Տ Ե Ն

Նամարանի տէրը

Ֆաթմալ

Շէլի Մահմուտ

Բանաստեղծութիւններ

Սուլթան Համիդի Գահ. տարեգարձը

ՀՀ Ազգային գրադարան



NL0313334

27472

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

Սլեքների աղջիկը  
Անիծեալ փառք, Պոտապենկոյի  
Սլքոնս Դոդէի Աքայորդու մահը,  
" " Բրերլինի պաշարումը,  
" " Կորնիլ-աձիի դաղսնիքը,

ԳԽՆԸ 10 ԿՈՊԵԿ

ԴԻՄԵԼ հեղինակին՝ Անա. Մ. Ռվու,